ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՆԱՆԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МАРЗ АРМАВИРА
МУНИЦИПАЛИТЕТ ВАНАНДА

Թիվ 06

Արմավիրի մարզ գ.Վանանդ

« 17 » 01 2020թ.

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի մարզպետ

պարոն Հ.Մաթևոսյան

Հարգարժան պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Արմավիրի մարզի Վանանդ համայնքի ավագանու 2020 թ. հունվարի 17-ի թիվ 01 նիստի որոշումները:

Առդիր՝ 17 էջ

Վանանդի համայնքապետի պ/կ Ա. Դալալոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

17 հունվարի 2020 թ. թիվ 01 նիստի

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԹԻՎ 01

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի թիվ 01 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝		կողմ	դեմ	ձեռնպահ
Այլազ	Սլոյան			
Արթուր	Թովմասյան			
Քրիստինե	Խլղաթյան			

Վանանդի համայնքապետի պ/կ Ա. Դալալոյան

2020 թ. հունվարի 17
գ. Վանանդ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Վանանդի համայնքի ավագանու
2020 թ. հունվարի 17-ի թիվ 01 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

Արմավիրի մարզի Վանանդ համայնքի ավագանու թիվ 01 նիստի

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի թիվ 01 նիստի օրակարգի հաստատումը:

/ Զեկ. Ա. Դալալոյան/

2. Վանանդ համայնքի ավագանու 2020թ. հերթական նիստերի անցկացման ժամանակացույցի հաստատման հարցը:

/ Զեկ. Ա. Դալալոյան/

3. <<Վանանդի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու հարցը:

/ Զեկ. Ա. Դալալոյան/

4. Վարչական վերահսկողության արդյունքների քննարկման հարցը:

/ Զեկ. Ա. Դալալոյան/

5. Արմավիրի մարզի Վանանդ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը նոր խմբագրությամբ շարադրելու հարցը:

/ Զեկ. Ա. Դալալոյան/

6. Վանանդ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը որոշելու հարցը:

/ Զեկ. Ա. Դալալոյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

17 հունվարի 2020 թ. թիվ 01 նիստի

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԹԻՎ 02

ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը.

Վանանդ համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Արմավիրի մարզի Վանանդ համայնքի ավագանու 2020թ հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝		կողմ	դեմ	ձեռնպահ
Այլազ	Մլոյան			
Արթուր	Թովմասյան			
Քրիստինե	Խլղաթյան			

Վանանդի համայնքապետի պ/կ՝ Ա. Դալալոյան

2020 թ. հունվարի 17
գ. Վանանդ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետու Արմավիրի մարզի
Վանանդի համայնքի ավագանու
2020 թ. հունվարի 17-ի թիվ 02 որոշման

ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ. ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. մարտի 25-ին
2. մայիսի 25-ին
3. հուլիսի 24-ին
4. սեպտեմբերի 25-ին
5. նոյեմբերի 25-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

17 հունվարի 2020 թ. թիվ 01 նիստի

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԹԻՎ 03

ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը.

Վանանդ համայնքի ավագանին որոշեց.

1. Տալ համաձայնություն <<Վանանդի մանկապարտեզ>> համայնքային որ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու համար՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին պաշտոնակատարին՝ (Ա. Դալալոյան) սահմանված կարգով <<Վանանդի մանկապարտեզ>> համայնքային որ առևտրային կազմակերպության տնօրենի հետ կնքել գույքի անհատույց օգտագործման տրամադրման պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝		կողմ	դեմ	ձեռնպահ
Այլազ	Սլոյան			
Արթուր	Թովմասյան			
Քրիստինե	Խլղաթյան			

Վանանդի համայնքապետի պ/կ՝ Ա. Դալալոյան

2020 թ. հունվարի 17
գ. Վանանդ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Վանանդի համայնքի ավագանու
2020 թ. հունվարի 17-ի թիվ 03 որոշման

Հ/Հ	Գույքի անվանումը	Քանակը	Ընդհանուր արժեքը / ՀՀ դրամ/
1.	Մանկական սեղան	10	11000
2.	Մանկական աթոռ	40	300000
3.	Մանկական մահճակալ	40	1600000
4.	Խաղալիքների պահարան	4	180000
5.	Ուսուցչական սեղան	2	64000
6.	Ուսուցչական աթոռ	5	49000
7.	Գրապահարան	1	30000
8.	Տնօրենի սեղան	1	38000
9.	Զգեստապահարան 5 տեղանոց	4	284000
10.	Թելի բաժակ	50	18000
11.	Ափսե	60	28800
12.	Պիալա	14	7700
13.	Պիալա	9	4680
14.	Պիալա	37	23310
15.	Դանակների հավաքածու	1	2380
16.	Ման կրեմի	1	1540
17.	Դանակ	2	1440
18.	Տախտակ փայտե	2	3500
19.	Տախտակ փայտե	2	1580
20.	Բանկա ապակե	6	4260
21.	Կաթսա խորը	1	22630
22.	Կաթսա խորը	1	14750
23.	Պատառաքաղ	24	6000
24.	Պատառաքաղ	26	4160
25.	Անկողնային հավաքածու	60	198000
26.	Բարձի երես	60	24000
27.	Բարձ	50	75000
28.	Ծածկոց	40	272000
29.	Շերեփ ներժ	1	1570
30.	Ավել գոգաթիակով	2	5480
31.	Դույլ հատակի փայտով	2	15580
32.	Սրբիչ խոհանոցի	10	3700
33.	Շոր հատակի	10	2700
34.	Աղբաման պլաստմասե	6	7560
35.	Մետաղյա տակդիր	3	1320
36.	Տակդիր կերամիկա	3	3060
37.	Ման շորի	1	6320
38.	Բռնիչ կտորե	2	1000
39.	Գոգոնոց	2	3260
40.	Ամանի շոր	1	4060
41.	Փայտ հատակի	1	1960
42.	Արդուկի սեղան	1	18980
43.	Ճաշի գդալ	48	12480

44.	Հաշի գդալ ներժ	6	960
45.	Շերեփ	1	690
46.	Խառնիչ ներժ	4	5480
47.	Թաս պլաստմասե կլոր	2	2000
48.	Թաս պլաստմասե 10,5 լ	2	1680
49.	Քամիչ թասով	2	3240
50.	Գդալ փայտե	3	1230
51.	Քամիչ	1	650
52.	Քերիչ	2	2200
53.	Քամիչ պլաստմասե	4	620
54.	Քամիչ պոչով	1	260
55.	Պիալա պլաստմասե	3	990
56.	Աման սառնարանի	1	710
57.	Աման սառնարանի 3 լ	1	700
58.	կաթսա	1	13520
59.	Սկուտեղ պլաստմասե	2	2720
60.	Սկուտեղ ներժ	2	2980
61.	Աման սառնարանի	1	2560
62.	Թեյնիկ ներժ 2,5 լ	1	5020
63.	Աման սառնարանի	1	1990
64.	Ավել զոգաթիակով	1	2580
65.	դույլ	1	1190
66.	Աղբաման	1	4030
67.	Կոնստրուկտոր	1	8100
68.	Փազլ	4	24000
69.	Գորգ սպորտային	2	7800
70.	Լեգո մեծ պարկ	1	8500
71.	դոմինո	1	650
72.	Խոհանոցային հավաքածու	1	4400
73.	Մանկական փոշեկուլ	1	6900
74.	խաղ	1	10500
75.	Փայտե փազլ	2	950
76.	Տիպ	1	1850
77.	Տիպ	1	2500
78.	Տիպ մուլտհերոսներ	9	5850
79.	Տիպ հավաքածոի	2	2700
80.	Երկարացման լար	1	1750
81.	Մաքրող գել	1	1400
82.	դոմինո	6	3900
83.	Տիկնիկ զամբյուղի մեջ	2	5600
84.	Տիկնիկ	1	2000
85.	խաղ	1	1250
86.	Հավաքովի խաղ	1	2950
87.	տիկնիկ	1	2100
88.	Խաղ մուրճով	2	4000
89.	Փայտե կուբիկ	1	3300
90.	լեգո	1	2950
91.	Փայտե լեգո պայուսակով	1	2650
92.	Փազլ	2	3200
93.	Թազլ փափուկ	1	750
94.	Խաղ փազլ	1	590
95.	Փազլ	1	1350

96.	Մոզայկա	1	2150
97.	Լեզո	1	3400
98.	Շարիկ	1	850
99.	Պարան	3	350
100.	Պարան	1	150
101.	Գնդակ	1	200
102.	Կենդանիներ	1	2500
103.	Տրակտոր	1	2300
104.	Թեյնիկ մանկական	3	8700
105.	Կարի մեքենա մանկական	1	5800
106.	Թեյի հավաքածու	1	5600
107.	Սամասֆալ	1	3300
108.	կենդանիներ	1	2000
109.	Մանկական խաղ	1	4100
110.	Լեզո	1	7900
111.	Գնդակ	1	300
112.	Գնդակ	1	310
113.	Գազօջախ FISHER FFC31DX	1	170000
114.	Ջրի ապարատ MIDEA YL1337SW	1	68000
115.	Սառնարան MIDEA HD845FWENST	1	430000
116.	Լվածքի մեքենա SAMSUNG WW80J5545FX/lp	1	215000
117.	Հարիչ PHILIPS HR3745/00	1	28000
118.	Հյութահան MYSTERY MJE1905	1	20000
119.	Բլենդեռ GORENJE B600BG	1	27000
120	Արդուկ PHILIPS GC2998/80	1	32000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

17 հունվարի 2020 թ. թիվ 01 նիստի

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԹԻՎ 04

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 37-րդ կետով, հիմք ընդունելով Վարչական վերահսկողության շրջանակներում Արմավիրի մարզի Վանանդ համայնքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատանքային խմբի իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ 2019 թվականի դեկտեմբերի 18-ի արձանագրությունը, ՀՀ Արմավիրի մարզպետի՝ 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 01/13/07514-2019 գրությունը և Վանանդ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Վանանդ համայնքի ավագանին որոշեց.

1. Վարչական վերահսկողության շրջանակներում Արմավիրի մարզի Վանանդ համայնքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատանքային խմբի ստուգումների արդյունքների վերաբերյալ 2019 թվականի դեկտեմբերի 18-ի արձանագրությունն ընդունել ի գիտություն:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին /Ջ. Մանուկյան/ ձեռնարկել համապատասխան միջոցներ թերություններն ու խախտումները վերականգնելու և նմանատիպ խախտումները հետագայում բացառելու համար :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝		կողմ	դեմ	ձեռնպահ
Այլազ	Սլոյան			
Արթուր	Թովմասյան			
Քրիստինե	Խլղաթյան			

Վանանդի համայնքապետի պ/կ՝ Ա. Դալալոյան

2020 թ. հունվարի 17

գ. Վանանդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

17 հունվարի 2020 թ.

թիվ 01 նիստի

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԹԻՎ 05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 30-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը.

Վանանդ համայնքի ավագանին որոշեց.

1. Արմավիրի մարզի Վանանդ համայնքի ավագանու 2014 թվականի մայիսի 26-ի <<Արմավիրի մարզի Վանանդ գյուղական համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին >> թիվ 20-Ն որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝		կողմ	դեմ	ձեռնպահ
Այլազ	Սլոյան			
Արթուր	Թովմասյան			
Քրիստինե	Խլղաթյան			

Վանանդի համայնքապետի պ/կ՝ Ա. Դալալոյան

2020 թ. հունվարի 17
գ. Վանանդ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի
Վանանդի համայնքի ավագանու
2020 թ. հունվարի 17-ի թիվ 05 որոշման

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կանոնադրությունը կարգավորում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ գյուղական համայնքի վարչատարածքային և սոցիալ-տնտեսական զարգացման տարածքների նպատակային օգտագործման, ինժիներատրանսպորտային և այլ ենթակառուցվածքների կազմակերպման, կանխատեսման, ծրագրման և նախագծման բոլոր տեսակները, շենքերի / ներառյալ ժամանակավոր /, շինությունների վերակառուցման, վերականգնման, բարեկարգման / նաև քանդման / , շահագործման, ինչպես նաև քաղաքաշինության գործունեության բոլոր սուբյեկտների հարաբերությունները:

Կանոնադրությունը պարտադիր է քաղաքաշինական գործունեության բոլոր սուբյեկտների համար՝ անկախ սեփականության ձևից: Սույն կանոնադրությունը խախտող սուբյեկտները պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

1) Քաղաքաշինական գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտների համար պարտադիր են քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը,որը ապահովում է հուսալիության, շրջակա միջավայրի ապահովության, հակահրդեհային, սանիտարահիգենիկ այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշներ, ինչպես նաև նախագծման իրականացման ու շահագործման ընթացքում որակի ապահովման պայմաններ:

Ճարտարապետահատակագծային առաջադրանքը համայնքում տալիս է համայնքի ղեկավարը՝ ՀՀ կառավարության սահմանված կարգով: Շինարարության թույլտվությունը տրվում է ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի հաստատումից հետո, համայնքի ղեկավարի կողմից:Շինարարության թույլտվություն չի պահանջվում շենքերի, շինությունների, ընթացիկ վերանորոգման, շենքերի հարդարման և տարածքների բարեկարգման աշխատանքների համար՝ եթե դրանք չեն խոչնդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը կամ չեն հակասում սահմանված սերվիտուտներին: Քանդման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը:

2) Քաղաքշինական գործունեությունը իրականացվում է բացառապես հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան: Ավարտված շինարարության փաստագրումը թույլատրվում է միայն շահագործման ակտը ձևակերպելուց հետո: Ավարտված շինարարության շահագործման ընդունումը փաստագրում է համայնքի ղեկավարը՝ ՀՀ կառավարության սահմանված կարգով:

3) Օբյեկտների կառուցումը իրականացվում է ՀՀ քաղաքաշինության օրենքով՝ սահմանված կարգով նախագծերի ձեռքբերման, փորձաքննության անցկացման, շինարարության թույլտվության ստացումով:

4) Արգելվում է առանց համայնքի ղեկավարի որոշման և թույլտվության շենքերի պատշգամբների, ինչպես նաև վարձակալված ոչ բնակելի տարածքներում որևէ վերափոխումներ կատարելը և շենքի արտաքին տեսքը փոփոխելը:

5) Արգելվում է գազոններին կամ մայթերին կից հողատարածքները բանջարանոցի վերածելը, նախամուտքերը և սանդուղքավանդակները տնտեսական իրերով ծանրաբեռնելը:

3. ԳՈՎԱԶԴՆԵՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ

1) Բոլոր տեսակի արտաքին գովազդային նյութերի, ցուցափեղկերի, հայտարարությունների, ցուցատախտակների և այլ տեղեկատվական միջոցների տեղադրումը շենքերի, պարիսպների, առանձին վահանակների և այլ ճարտարապետական կառույցների վրա թույլատրվում է միայն համայնքի ղեկավարի որոշմամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

2) Գովազդները պետք է լինեն << Գովազդի մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ հավաստի, օրինականպատշաճ պահպանելով արտաքին գովազդի տեղադրման համար թույլտվության բոլոր պայմանները:
Գովազդի տեղաբաշխման նկատմամբ հսկողությունն իրականացնում է գյուղապետարանը: Արգելվում է անբարեխիղճ գովազդի տեղադրումը:

3) Ժամանակավոր տաղավարների տեղադրումը թույլատրվում է ըստ կառավարության կողմից սահմանված կարգի, համայնքի ղեկավարի որոշմամբ, հողօգտագործման և շինարարության բաժնի մասնագետի ներկայությամբ՝համաձայն առևտրի և սպասարկման համայնքային կանոնների:

4)Վերը նշված գործողությունների համար գանձվում են համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական վճարներ:

5)Համայնքի ղեկավարը սահմանում է շենքերի և շինությունների համարակալումը: Համայնքի ավագանու որոշմամբ անվանվում և վերանվանվում են համայնքային նշանակության փողոցները, հրապարակները, գբոսայգիները և այլն:

6) Արգելվում է ինքնուրույն կերպով հանել, տեղադրել և վերատեղադրել փողոցների անվանումները և համարակալման ցուցանակները:

4. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

2) Ապահովել քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը ՀՀ կառավարության սահմանված կարգով:

3) Ինժիներական սպասարկում իրականացնող ծառայություններից ստանալ քաղաքաշինական օբյեկտի ինժիներական ենթակառուցվածքների նախագծման, կառուցման և շահագործման տեխնիկական պայմանները:

4) Շինարարական աշխատանքներ կատարելիս շինհրապարակները պետք է ցանկապատվեն ժամանակավորապես և տեսանելի տեղում փակցնեն համապատասխան ցուցանակներ: Շինարարական աղբն ու հողը պետք է դուրս բերվե և կուտակվելու ընդացքում:Շինարական կամ վերանորոգման աշխատանքներ կատարելիս ձեռնարկվում են միջոցառումներ, որպեսզի չկեղտոտվեն շինհրապարակին հարող տարածքները:

5) Հողային աշխատանքների կատարումը (հրապարակներում ,մայթերում, պուրակներում և այլ տեղերում) ստորգետնյա ինժիներական ցանցերի կառուցման և վերանորոգման ժամանակ, կապված վերգետնյա կառույցների հետ, թույլատրվում է միայն ըստ համաձայնեցված նախագծերի և համայնքի ղեկավարի թույլտվությամբ:

6) Ճանապարհածածկույթի կամ հողա ծածկի քանդման հետ կապված վթարային աշխատանքները թույլատրվում են ընդունված վթարային հեռախոսագրի առկայությամբ այն կազմակերպությունների կողմից, որոնք տ նօրինում են հաշվեկշռում գտնվող ինժիներական ցանցերը:

7) Ստորգետնյա ինժիներական ցանցերի վթարների վերացումը սկսվում է անմիջապես հեռախոսագրի հաղորդումից հետո, այդ մասին տեղյակ պահելով ավտովերահսկողությանը և կոմունալ սպասարկման ձեռնարկությանը:

8) Վթարային աշխատանքների տեղը պետք է շրջափակվի , կահավորվի ճանապարհային նշաններով և լուսավորվի մութն ընկնելիս: Վթարը վերացնող կազմկերպությունը պարտավոր է նաև անհապաղ վերականգնի քանդված հատվածը հողով , շերտային խտացումով և համապատասխան չափի խճանյութով, ինչպես նաև մաքրի ավելորդ հողից և շինարարական մնացորդներից :

9) Վթարից վերականգնված հատվածները հանձնվում են կոմունալ սպասարկման ձեռնարկությանը կամ ճանապարհային հսկողություն իրականացնող ծառայությունների ներկայացուցուչներին ակտով, ճանապարհի ծածկույթը անբողջովին վերականգնելուց հետո:

10) Կոպականապես արգելվում է ստորգետնյա ինժիներական ցանցերի կառուցման կամ պլանային վերանորոգման աշխատանքների կատարումը վթարային աշխատանքների պատրվակով:

11) Արգելվում է ինքնակամ պեղումների, հորատման, սյուների ու ձողերի տեղադրման, հողածածկույթի մշակման, հրապարակների հողահավասարեցման ,փլատակների և քանդման ենթակա կառույցների տակի հողածածկույթների մշակումը առանց ստորգետնյա ինժիներական ցանցերի (էլեկրականություն ,գազ, ջուր և այլն) անջատման:

12) Արգելվում է որևէ տեսակի հողային աշխատանքների կատարարումը նոր ճանապարհա ծածկույթի /ասֆալտի/ կատարումից հետո փողոցներում, հրապարակներում:Բացառություններ թույլատրվում են նիայն վթարների դեպքում:

13) Շինարարական, վերանորոգման աշխատանքների ժամանակ ցանկապատման, երթեկության կարգավորման, ճանապարհային նշաններով կահավորման և գիշերային լուսավորման պատասխանատվությունը կրում է քաղաքաշինության գործունեության սուբյեկտը:Շինարարական կազմակերպությունը բպարտավոր է մագիստրալային և հասարակական տրանսպորտի երթեկության, փողոցների շարժման ուղղությունների փոփոխության մասին պետավտոտեսչության միջոցով ապահովել բնակիչների անվտանգությունը:Աշխատանքների ավարտից հետո ժամանակավոր կարգավորման նշանները վերացվում են:

14) Փողոցների երթևեկելի մասի մասնակի վերանորոգումների ժամանակ պետք է ապահովի տրանսպորտի անխափան երթևեկությունը, իսկ միջանցիկ անցումն փակելիս ապահովի հրդեհային պաշպանության, շտապ օգնության, հատուկ սանիտարական մաքրման , էլեկտրական և գազի ծառայության մեքենաների երթևեկության պայմանները: Անցումների փակման վերաբերյալ տեղյակ է պահվում շտապ օգնության , հակահրդեհային ծառայություններին և ավտոտեսչությանը:

15) Ժամանակավոր շրջանցումային ճանապարհները, հետիոտնային արահետները, կամուրջները , վերանորոգման աշխատանքները ավարտելիս վերացնում են կառուցապատման աշխատանքներն իրականացնող կազմակերպություններ կողմից:

16) Ճանապարհների լրիվ փակման և երթևեկության դադարեցման որոշումը ընդունում է համայնքի ղեկավարը՝ համաձայնեցնելով պետավտոտեսչության հետ:

17) Երթևեկելի մասի և մայթերի շինարարության վերանորոգման աշխատանքների ժամանակ ստորգետնյա ցանցերի տնօրինողները պարտավոր են իրենց ուժերով, վերանորոգում կատարողների պահանջով, կատարել վերատեղադրող ցանցերի անջատումը: Բարեկարգման նպատակով ստորգետնյա ինժիներական ցանցերի նոր նշումների վերատեղադրումը կատարում են ցանցերը տնօրինողները, շինարարություն կամ վերանորոգումը իրականացնող պատվիրատու կազմակերպության պատվերով ու նրա միջոցներով: Նախագծից էական շեղումներ ունեցող ինժիներական ցանցերի տնօրինողները վերատեղադրման աշխատանքները կատարում են իրենք՝ սեփական միջոցներով:

Քաղաքացիների կողմից ինժիներական կառուցումների միացումը իրականացվում է բարեկարգման աշխատանքների ժամանակ:

18) Թրթռարավոր տրակտորների և այլ մեքենաների շարժումը վերանորոգված փողոցներով արգելվում է: Նման տրանսպորտի տեղափոխությունը համայնքի տարածքում կազմակերպվում է միջդաշտային ճանապարհներով:

19) Փողոցները, մայթերը, ասֆալտապատված և բարեկարգված այլ տարածությունները ինքնակամ քանդողները անհապաղ դադարեցնում են քանդման աշխատանքները, իրենց միջոցներով վերականգնում քանդված տարածքի նախկին տեսքը և օրենքով սահմանված կարգով կրում պատասխանատվություն:

5.ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԻՆԺԻՆԵՐԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՈԳՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1) Ստորգետնյա ինժիներական ցանցերի հետ առնչվող բոլոր տեսակի շինարարական և վերանորոգման աշխատանքները թույլատրվում են միայն այն նախագծով և սխեմաներով /տեխնիկական պայման/, որոնք համաձայնեցված են ճարտարապետական բաժնի և ներքոհիշյալ կազմակերպությունների հետ:

- էլեկտրացանց
- կապի ձեռնարկություն
- գազի շահագործման վարչություն
- ճանշին վերանորոգման վարչություն
- կոմունալ սպասարկման ձեռնարկություն
- ջրմուղ- կոյուղու ձեռնարկություն
- պետավտոտեսչություն

Առանձին դեպքերում, երբ ինժիներական ստորգետնյա կառույցները շոշափում են այլ կազմկերպությունների շահերը/զինվորական, հատուկ շինարարական, երկաթ գիծ և այլն/ նախագծերը պետք է համաձայնեցվեն նաև նրանց հետ:

2) Արգելվում է հաստատված ինժիներական ցանցերի ծրագրերի փոփոխումը առանց համայնքի ղեկավարի և շահագրգռված կազմակերպությունների հետ համաձայնեցման: Ծրագրերի տարաձայնությունների վերաբերյալ վերջնական որոշումը ընդունվում է գյուղապետարանի քաղաքաշինության հարցերի հանձնաժողովի կողմից:

3) Համաձայնեցված նախագծերը ուժի մեջ են երկու տարվա ընդացքում: Անկախ դրանից յուրաքանչյուր նախագծով կատարվող ինժիներական ցանցերի տեղակայման , վերակառուցման աշխատանքները, որոնք կապված են հողածածկի, ասֆալտի և բարեկարգ այլ տարածությունների հետ աշխատանքները սկսելուց առաջ պետք է ունենալ գյուղապետարանի թույլտվությունը:

4) Առանց գյուղապետարանի հետ համաձայնեցնելու հողային աշխատանքները կարող են կատարվել սեփական տարածքում կամ օտարման գոտիներում, դրանց ինժիներական կառուցվածքների տնօրինող հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների պատասխանատվությամբ:

5) Անհատ քաղաքացիներին առանձին վթարների դեպքում թույլտվությունը տրվում է գյուղապետարանի կողմից՝ 5-1) կետում նշված կազմակերպությունների համաձայնության և առաջադրած տեխնիկական պայմանի հիման վրա:

6) Թուլտվությունները տրվում են պատվիրատու կազմակերպություններին, անհատ քաղաքացիներին, անմիջապես աշխատանք կատարողներին, որը ուժի մեջ է վերջիների համար նշված տեղամասի, աշխատանքի ձևի,ծավալի և ժամանակաշրջանի նշումների դեպքում:

7) Կարմիր գծերի սահմաններում / փողոցների և թաղամասերի անցումները/ ստորգետնյա ինժիներական ցանցերի շինարարության կամ վերանորոգման աշխատանքների կամ վերանորոգման աշխատանքների թույլտվություններն ստանալու համար գյուղապետարանին պետք է ներկայացվեն .

- ճանապարհածածկույթի, ինժիներական ցանցերի տեղակայման, վերանորոգման թերությունների ակտ, նշելով ճանապարհածածկույթի և ինժիներական կառույցների սոկա վիճակը և վերանորոգման չափերն ու ծավալները:
- ծրագրի նախագիծը՝ համաձայնեցված ճարտարապետական բաժնի և 5-1) կետում նշված շահագրգիռ կազմակերպությունների հետ
- կապալառու կազմակերպության կնիքով համաձայնեցված պլան:

8) Կապալային կազմակերպության հետ պայմանագիր չունեցող կազմակերպությունները պետք է ներկայացնեն երաշխավորագիր- նամակ՝ ստորագրված պետի և հաշվապահի կողմից:

9) Աշխատանքի կատարման պատվերները նախորոք քննարկվում են քաղաքաշինության հանձնաժողովի կողմից և նրա որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ, որտեղ նշվում են նաև աշխատանքների կատարման ժամկետները:

10) Աշխատանքների կատարման թույլտվությունները տրվում են սահմանված վճարները մուծելուց հետո:

11) Ստորգետնյա և վերգետնյա ինժիներական ցանցերի տեղակայման և վերանորոգման, ինչպես նաև ասֆալտի ծածկի և բարեկարգման այլ էլեմենտների վերականգնմ,ան աշխատանքները պետք է կատարեն մասնագիտացված կազմակերպությունները:

12) Աշխատանքների կատարման ընթացքում պատասխանատու աշխատողի ներկայությունը պարտադիր է, որն իր հետ պետք է ունենա թույլտվություն և համաձայնեցված բանվորական ու աշխատանքի կատարման նախագծերը:

Աշխատանքները սկսելու նախօրյակին պետք է տեղյակ պահել ինժիներական ցանցեր ունեցող շահագրգիռ կազմակերպություններին,ցանցեր ունեցող կազմակերպություններին՝ ցանցերի տեղը համատեղ ճշտելու համար:

13) Աշխատանքների կատարման տարածքում գոյություն ունեցող ստորգետնյա ինժիներական ցանցերի փչացումից ապահովելու պատասխանատուն այն անձն է , որը ղեկավարում է աշխատանքների կատարումը: Նրանք պարտավոր են կատարել բոլոր տեխնիկական պահանջները և կազմակերպությունների պայմանները:

14) Փողոցում, հրապարակներում և մյուս բարեկարգված տարածություններում ստորգետնյա ինժիներական ցանցերի խրամուղիների փորման և լցման վերգետնյա կառույցների ժամանակ պետք է պահպանվեն հետևյալ պայմանների կատարումը.

- խրամուղու լայնությունը պետք է լինի նվազագույնը, ասֆալտի քանդումը պետք է կատարվի կտրման հատուկ մեքենաներով:Խրամուղիների և փոսորակների

պատերը համաձայն նախագծերի պետք է ամրացվեն, նրանց լցման համար պետք է օգտագործվի մաքուր հող 20սմ-ից ոչ ավելի մշերտով,որը պետք է խտացվի համաձայն շինարարական նորմերի

-ջրահոսերի և հեղուկների հեռացումը խրամուղիներից և փոսորակներից պետք է կատարվի միայն դեպի անձրևատարների մեջ: Արգելվում է դրանց լցնելը երթևեկելի մաս կամ մայթի վրա:

15) Շինարարական, վերակառուցման կամ վերանորոգման աշխատանքների ավարտից հետո պատասխանատու կատարողը պետք է .

-24 ժամվա ընթացքում մաքրի վերանորոգումից հետո մնացած շինարարական մնացորդները:

-կանչել տնօրինող կազմակերպություններին, ակտով հանձնել վերանորոգված բարեկարգման կառուցվածքները և ասֆալտածածկույթը:

-քանդված մայթերի վերանորոգումն անկախ ծածկույթ ձևերից պետք է կատարվի ամբողջ գոյություն ունեցող լայնությամբ:

-փողոցի երթևեկելի մասի ասֆալտբետոնային ծածկը վերանորոգվում է նախկին վիճակով,մինչև քանդումը կազմված հատուկ ակտի պահանջներով, խճածածկի դեպքում խրամուղու կրկնակի լայնության չափով:

-ասֆալտբետոնյա ծածկույթը լրացվում է մինչև եզրաքարերը, եթե խրամուղու և նրա միջև տարածությունը փոքր է 2մմ-ից:

- Վերանորոգված կառուցվածքների տնօրինող կազմակերպության առաջին իսկ պահանջով մեկ տարվա երաշխավորված ժամկետում կատարում է վերանորոգման աշխատանքներ:

16) Ավազապատ և հողածածկ ունեցող տարածուծությունների վերականգնումը կատարվում է քաղման չափով, որը պետք է հաստատվի երկկողմ ակտավորումներով ՝ մինչև աշխատանքների սկսելը:

17) Կանաչ տարածությունները վերականգնվում են համաձայն կանաչապատման ծառայության պայմանների:

18) Վերգետնյա կառույցների /ցանկապատներ, հենապատներ, ճանապարհային նշաններ և այլն/ վերանորոգվում են շինարարության վերանորոգում կատարող կազմակերպությունների կամ անհատների կողմից:

19) Ճանապարհածածկույթի վերանորոգման ժամկետները սահմանվում են ելնելով փողոցների նշանակությունից և աշխատանքների ծավալից՝ մագիստրալային և ինտենսիվ շարժման փողոցներում ՝24, իսկ մյուսներում ՝ 48 ժամվա ընթացքում: Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելիս պետք ՝է հաշվի առնել սույն կետի պահանջները:

20) Վերականգնված ճանապարհային ծածկույթներն ըստ պատկանելության հանձնվում են շահագործող կազմակերպություններին՝ կատարողական գծագրերի հետ միասն:

6. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

1) Քաղաքաշինական գործունեության վերահսկողությունն իրականացնում է քաղաքաշինական պետական տեսչության Արմավիրի տարածքային բաժինը, Արմավիրի մարզպետը, որը միաժամանակ համակարգում է համայնքի ղեկավարների գործունեությունը քաղաքաշինության բնագավառում:Վանանդ համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին, ճարտարապետահատակագծային առաջադրանքների, քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելումը: Կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված

Քաղաքաշինական գործունեության հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

17 հունվարի 2020 թ. թիվ 01 նիստի

ՈՐՈՇՈՒՄ թիվ 06

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ, կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին որոշեց՝

1. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշել 175.000 ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝		կողմ	դեմ	ձեռնպահ
Այլազ	Սլոյան			
Արթուր	Թովմասյան			
Քրիստինե	Խլղաթյան			

Վանանդի համայնքապետի պ/կ՝ Ա. Դալալոյան

2020 թ. հունվարի 17
գ. Վանանդ